

## ՍԵՐԳԵՅ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասպիրանտ

# ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒՇՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Յուրաքանչյուր երկրի տարածքային զարգացման կառավարման հիմնական խնդիրներից մեկը դրանց կայուն և համաշափ զարգացման ապահովումն է երկարաժամկետում: Հողվածում դիտարկվել են ՀՀ տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրները, առանձնացվել են այն չափանիշները, որոնք առավել ամրողական կարող են բնութագրել սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը կայուն զարգացման համատեքսում: Ներկայացված են արաջարկություններ տարածքային կայուն զարգացման մոդելին անցնելու համար:

**Հիմնարարեր.** սոցիալ-տնտեսական զարգացում, կայուն զարգացում, կյանքի որակ, մարդկային ներուժի զարգացման ցուցիչ (ինդեքս), սոցիալական կայունություն, բնապահպանական հավասարակշռություն

JEL: R10, R12, R13, O21, O29

Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում տարածքային սոցիալ-տնտեսական համակարգերի կառավարման գլխավոր խնդիրներից մեկը դրանց կայուն և համաշափ զարգացման ապահովումն է երկարաժամկետում:

Սոցիալ-տնտեսական համակարգերի կայուն զարգացումը, լայն ինաստով, մեկնաբանվում է որպես ներկա և ապագա սերունդների պահանջմունքների բավարարման նպատակով տնտեսական, սոցիալական և բնապահպանական ենթահամակարգերի ներդաշնակեցում, հաշվեկշռված զարգացում: Այս համատեքսում, տարածքային կայուն զարգացումը, ապահովելով տարածքային սոցիալական և տնտեսական կայունություն, արտադրողական ուժերի պլանաշափ զարգացում, միաժամանակ միտված է նվազեցնելու տա-

բաժքային անհամաշափությունները, բարելավելու մարդու նյութական բարեկեցությունը՝ հոգևոր զարգացման և սոցիալական ինքնախրացման համար պյամանների ապահովմամբ, շրջակա միջավայրի պահպանմամբ և ռեսուլսների ռացիոնալ օգտագործմամբ՝ առանց վնասելու ապազա սերունդների շահերը։ Անշուշտ, դրանում որոշիչ նշանակություն ունի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման կայունություննը, որը, մեր կարծիքով, առավել ամբողջական կարելի է գնահատել հետևյալ չափանիշներով։

1. տնտեսության զարգացման մակարդակը, աճի տեմպերը, կառուցվածքը,
2. բնակչության կյանքի որակը և անվտանգությունը,
3. սոցիալական կայունությունը և հավասարակշռվածությունը,
4. կայուն բնապահպանական հավասարակշռությունը։

Ենթելով նշված չափանիշներից՝ վերլուծենք մեր հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման առկա միտումները։

Հայաստանի անցումը շուկայական հարաբերություններին՝ ընդհուած 1994 թ., ուղեկցվում էր տնտեսության մեջ աննախադեպ ճգնաժամային երևույթներով։ Խորհրդային Սիության փլուզումով պյամանավորված՝ միութենական տնտեսական կապերի խզումը, դարաբարյան հակամարտությունը, տրամադրության շրջափակումը, վարելիքի ներմուծման ծավալների խիստ կրծատումը, ինչպես նաև ավելից երկրաշրժի հետևանքները հանգեցրին երկրի լուրջ տնտեսական անկման։ 1990–1994 թթ. հանրապետության իրական ՀՍԱ-ն կրծատվեց ավելի քան երկու անգամ, և միայն 1995 թ. դիտվեց, ապա կայուն դարձավ տնտեսական աճի միտումը։ ՀՀ ԱՎԾ տվյալներով 1994–1998 թթ. ընթացքում ՀՍԱ-ն աճել է 31.7%-ով (աճի միջին տարեկան տեմպը կազմել է 6.4%), որի ավելի քան 82%-ը ապահովել են հանրապետության տնտեսության չորս բազային ճյուղերը՝ արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն և ծառայությունների ոլորտ։ 1998–2008 թթ. ժամանակաշրջանում տնտեսական միջին տարեկան աճը կազմել է 10.5%, որը շուրջ 2.5 անգամ գերազանցում էր համաշխարհային տնտեսության աճի ցուցանիշները։ Այդ տարիներին հանրապետությունը, աճի տեմպերով, առաջատարն էր տարածաշրջանում և առաջատարներից մեկը զարգացող երկրների մեջ։ Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով 2008 թ. վերջերից նկատելի դարձավ տնտեսական աճի տեմպերի նվազում, որին հաջորդած երկու տարիներին երկրի տնտեսությունն իրական աճ չարձանագրեց, ավելին՝ 2009 թ. արձանագրվեց 14.2% տնտեսական անկում։ Համաշխարհային տնտեսական ճգնաժամը լուրջ բացասական ազդեցություն ունեցավ Հայաստանի տնտեսության վրա, որի հետևանքով աճի ցուցանիշը 2010 թ. կազմեց ընդամենը 2.2%, իսկ 2011 թ.՝ 4.7%։ Միայն 2012 թ. աճի միտումները բարելավվեցին՝ գրանցելով 7.2% տնտեսական աճ, որից հետո 2012–2015 թթ. ՀՍԱ միջին աճը կազմեց 4.3%։ Այս ամենը իհմք է տալիս փաստելու, որ ճգնաժամը մեր երկրի տնտեսության զարգացման վրա նշանակալի բացասական ազդեցություն ունեցավ<sup>1</sup>։

Երկրում տեղի ունեցող գործընթացներն արտացոլվում են տարածքային կազմավորումներում։ Ընդ որում, որպես զարգացման իհմք հանդես է գալիս տնտեսությունը, որի մակարդակով որոշակի չափով պյամանավորված է

<sup>1</sup> Վերլուծությունները կատարվել են ՀՀ ԱՎԾ Ազգային հաշիվներ բաժնի տվյալների հիման վրա。  
<http://armstat.am/am/?nid=263>

բնակչության կյանքի որակը, սոցիալական ոլորտի ենթակառուցվածքների վիճակը, շրջակա միջավայրի վրա ծանրաբեռնվածության նվազեցման հնարավորությունը և ապագա սերունդների համար բարենպաստ պայմանների ապահովումը:

Որպես տնտեսական զարգացման կարևոր բնութագիր հանդես է գալիս համախառն ներքին արդյունքը: Անցած քսան տարիների՝ մեր երկրի տնտեսական աճը պայմանավորող գործոնների վերլուծությունը ցույց է տալիս, որ, չնայած ՀՆԱ կառուցվածքում տեղի ունեցող փոփոխություններին, այն դեռևս մեծ կենտրոնացվածություն և զգալի կախվածություն ունի այս կամ այն ճյուղի զարգացման ռիսկերից:

Յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացումը մեծապես կախված է արդյունաբերության ոլորտի վիճակից: Հայաստանում արդյունաբերությունը խորհրդային տարիներին ավանդաբար եղել է տնտեսության հիմքը: Անկախության տարիներից ի վեր մեր երկրի տնտեսությունը, անցնելով զարգացման մի քանի փուլերով, կրել է կառուցվածքային մեծ փոփոխություններ: Ընդհանուր առմամբ, եթե բնութագրենք հետխորհրդային Հայաստանի տնտեսությունը, ապա կարելի է ասել, որ այն ինդուստրիալ տնտեսությունից վերափոխվել է ագրարային և ծառայություններ մասուցող տնտեսության:

2010–2015 թթ. հանրապետությունում արդյունաբերությունը զարգացել է բավական կայուն՝ արձանագրելով մոտ 61% աճ: Ընդ որում, ճգնաժամից հետո ամենաարագը վերականգնվեց արդյունաբերությունը: 2011 թ. արդյունաբերական արտադրանքի ծավալը ավելացավ 21.2%-ով, իսկ հետագա հինգ տարիների ընթացքում միջին տարեկան աճը կազմել է 6.6%<sup>2</sup>: Հանրապետության արդյունաբերության առաջատար ճյուղերն են հանքագործական արդյունաբերությունը, սննդամթերքի, խմիչքների, ծխախոտային արտադրատեսակների և հիմնային մետաղների արտադրությունը, ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտադրությունն ու բաշխումը, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը: Արդյունաբերության կառուցվածքի ուսումնասիրությունը վկայում է, որ ամեն ինչ չէ, որ բարեհաջող է այս ոլորտում, ինչը սպառնալիք է կայուն զարգացման համար: Այսպես՝ արդյունաբերական արտադրանքի ծավալում մոտ 17%-ը բաժին է ընկնում հանքագործական արդյունաբերությանը, եթե սրան ավելացնենք հիմնային մետաղների (12.5%) և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (3.3%) արտադրությունը, որոնք հումքի առաջնային վերամշակման ոլորտներից են, ապա, փաստորեն, արդյունաբերության կառուցվածքում մոտ 1/3-ը հումքի և դրա առաջնային մշակման հետ կապված ճյուղերն են: Վերամշակող արդյունաբերության շուրջ 60%-ը բաժին է ընկնում սննդի, խմիչքների և ծխախոտի արտադրությանը, որն, ըստ էության, դարձյալ ենթադրում է գյուղատնտեսական հումքի առաջնային մշակում: Ինչ վերաբերում է բարձր տեխնոլոգիական արտադրությանը՝ քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների, դեղագործական արտադրանքի, համակարգչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների, էլեկտրական սարքավորանքի արտադրություններ, դրանց տեսակարար կշիռը վերամշակող արդյունաբերության մեջ չնչին է՝ ընդամենը մինչև 3%: Այդ ամենը հիմք է տալիս արձանագրելու, որ մեր

<sup>2</sup> Ուսումնասիրությունները կատարվել են << ԱՎԾ, << մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015 թ. և << սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թ. հունվար-դեկտեմբերին հրապարակումների հիման վրա:

Երկրի արդյունաբերությունը ունի թերզարգացած կառուցվածք, որ շուկայական հարաբերությունների անցման տարիներին առավելագույն զարգացում են ունեցել հումքի առաջնային մշակման հետ կապված ճյուղերը: Այս պայմաններում, կայուն զարգացման տեսակետից, հրատապ խնդիր է դառնում արդյունաբերության քաղաքականության ժամանակակից գործիքների կիրառման ակտիվացումը և բազմազանեցումը<sup>3</sup>:

Կայուն տնտեսական զարգացման ապահովման համար պետական իշխանության և տարածքային միավորների կառավարման մարմինների գերակա խնդիրներ, մեր կարծիքով, պետք է համարվեն.

- արտադրության խթանումը, նոր տնտեսական քաղաքականության մշակումն ու իրականացումը, որոնք հիմնված կլինեն իշխանության և գործարարության փոխահավետ համագործակցության վրա՝ ուղղված մրցունակության աճին,
- արդյունաբերության ոլորտի կառուցվածքի կատարելագործումը տնտեսության բազմազանեցման, ամենից առաջ բարձրտեխնոլոգիական արտադրությունների զարգացման ձանապարհով,
- անցումը գիտելիքահենք տնտեսության մոդելին՝ տնտեսության մեջ զարգացնելով գիտատար ճյուղերը:

2008–2009 թթ. ֆինանսատնտեսական ձգնաժամից հետո մեր երկրի ՀՆԱ կառուցվածքում տնտեսության մինչ այդ առաջատար ճյուղին՝ շինարարությանը փոխարինեց գյուղատնտեսությունը: Եվ ներկայումս ՀՆԱ ամբողջ ծավալի 17.3%-ն ապահովում է գյուղատնտեսությունը<sup>4</sup>: 2008–2015 թթ. գյուղատնտեսության հանախառն արտադրանքի ծավալն ավելացել է 59.6%-ով: Ոնդ որում, գյուղատնտեսական արտադրանքի 62% մասնաբաժինն ապահովել է բուսաբուծությունը, իսկ 38%-ը՝ անասնաբուծությունը<sup>5</sup>: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ գյուղատնտեսական արտադրանքի ծավալի ցուցիչներն այդ տարիներին կտրուկ տատանվել են, ինչը վկայում է ճյուղի՝ հատկապես բուսաբուծության զարգացումը բնութագրող ցուցանիշների զգալի կախվածությունը բնակլիմայական պայմաններից: Դրա հետ մեկտեղ, գյուղատնտեսությունում դեռևս բավական ցածր է արտադրողականության մակարդակը, ինչը պայմանավորված է կիրառվող տեխնոլոգիաների ցածր մակարդակով:

ՀՀ 2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում գյուղատնտեսությունն ամրագրված է որպես ոլորտային գերակայություն, որը, լինելով երկրում սննդի արդյունաբերության զարգացման և պարենային անվտանգության ապահովման կարևորագույն ոլորտներից մեկը, միաժամանակ ռազմավարական կարևոր նշանակություն ունի գյուղական համայնքների զարգացման համար: Գյուղատնտեսության մեջ գրաղված է երկրի ընդհանուր զբաղվածության մոտ 40%-ը, գյուղական համայնքների բնակչության եկամուտների գերակշիր մասը ստացվում է գյուղատնտեսական արտադրությունից և այդ ոլորտում վարձու աշխատանքից: Զնայած Վերջին

<sup>3</sup> Ուսումնասիրությունները կատարվել են ՀՀ ԱՎԾ Արդյունաբերության հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների 2015 թ. հրապարակման հիման վրա:

<sup>4</sup> Վերլուծությունները կատարվել են ՀՀ ԱՎԾ Ազգային հաշիվներ բաժնի տվյալների հիման վրա: <http://armstat.am/am/?nid=263>

<sup>5</sup> Ուսումնասիրությունները կատարվել են ՀՀ ԱՎԾ ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2010 թ., 2015 թ. և ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թ. հրապար-դեկտեմբերին հրապարակումների հիման վրա:

քսան տարիներին իրականացված մի շարք բարեփոխումներին, գյուղատնտեսության ոլորտում դեռևս առկա են բազմաթիվ չլուծված խնդիրներ: Գյուղատնտեսության բնագավառի խնդիրների շարքում առանձնանում են տնտեսությունների փոքր չափերը, որոնք, ըստ հանրապետության մարզերի, տատանվում են 0.6 հա-ից /Արարատի և Արմավիրի մարզեր/ մինչև 3.0 հա /Նախալեռնային և Լեռնային տարածաշրջաններ/<sup>6</sup>:

Գյուղատնտեսության ոլորտի առաջնային խնդիրներից է նաև գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածությունը: Ներկայումս դաշտային տեխնիկայով ապահովվածությունը հասնում է մինչև 10%-ի, ընդ որում, եղած տեխնիկայի մոտ 95%-ի շահագործման ժամկետը վաղուց է լրացել, որի պատճառով բարձր են այդ տեխնիկայի շահագործման ժախսերը, ցածր՝ արտադրողականությունը<sup>7</sup>:

Գյուղատնտեսության զարգացման համար խիստ կարևոր է վարելահողերի նպատակային օգտագործման և ոռոգման ջրապահովվածության մակարդակի բարձրացումը: 2015 թ. հողային հաշվեկշի տվյալներով ՀՀ գյուղատնտեսական ծավալում է մոտ 2.1 միլիոն հա հողատարածության վրա, որից վարելահողերի տարածքը 446.7 հազ. հա է, իսկ գյուղատնտեսական նշակարույսերի ցանքատարածությունները՝ 328.4 հազ. հա, փաստացի 118.3 հազ. հա կամ 26.5% վարելահող նպատակային չի օգտագործվում: Դրա հետ մեկտեղ, հանրապետության 233.0 հազ. հա ոռոգելի հողատարածքներից ոռոգվում է շուրջ 155.0 հազ. հա-ն կամ մոտ 67%-ը: Ոռոգման համակարգի տեխնիկական անմիտար վիճակի պատճառով ջրի կեսը կորցում է մինչև դաշտ հասնելը<sup>8</sup>:

Վերոնշյալ խնդիրների լուծման հիմնական նախապայմաններից է գյուղացիական տնտեսությունների խոշորացումը, որի համար անհրաժեշտ է իրականացնել մասնատված հողակտորների համատեղ օգտագործման և հողերի միավորման ծրագրեր՝ այդ նպատակով կիրառելով խթանման տարբեր լծակներ: Համաշխարհային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գյուղատնտեսությունում մասնավոր մանր արտադրողների հնարավորություններն առավելագույնս արդյունավետ օգտագործվում են կանավորության սկզբունքներով միավորված և համատեղ արտադրատնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպություններում, որի լավագույն ձևերից է գյուղատնտեսական կոռուպտացիայի և ֆերմերային տնտեսությունների զարգացումը:

Ոռոգման ջրապահովվածության մակարդակի բարձրացման նպատակով, ավանդական ոռոգման տեխնիկայի արդիականացման, ջրատարների վիճակի բարելավման հետ մեկտեղ, անհրաժեշտ է աստիճանաբար անցնել կարիքային ոռոգման համակարգի, որը ոչ միայն կապահովի առատ բերք, այլև կտնտեսի ոռոգման ջուրը:

Գյուղական բնակավայրերում աշխատուժի ցածր ծանրաբեռնվածության խնդրի լուծման համար անհրաժեշտ է խթանել ոչ գյուղատնտեսական զբաղվածությունը, մասնավորապես՝ աջակցել գյուղատնտեսության սպա-

<sup>6</sup> Տե՛ս Վ. Հայկազյան, Հայաստանի գյուղատնտեսության խնդիրները և զարգացման հեռանկարները, «ՀՀ-որ դար», 4/18/, 2007, էջ 45:

<sup>7</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 49:

<sup>8</sup> Ուսումնասիրությունները կատարվել են ՀՀ հողային հաշվեկշի մասին 2015 թ. հաշվետվության հիման վրա:

սարկման կարողությունների ստեղծմանը, զյուղմթերքի վերամշակմանը, ագրոգրասաշրջության զարգացմանը և այլն:

Անշուշտ, վերոնշյալ ուղղություններով ծրագրերն անհնար կլինի իրականացնել առանց պետական աջակցության, որը պետք է ուղղված լինի գյուղատնտեսությունում տնտեսավարողների գործունեության և ներդրումային միջավայրի համար բարենպաստ պայմանների ապահովմանը, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը, զյուղական բնակավայրերում ենթակառուցվածքների զարգացմանը և այդ ամենի համար իրավական հիմքերի ձևավորմանը:

Ժամանակակից աշխարհում կենսագործունեության անվտանգության և հարմարավետության ապահովման տեսակետից անչափ կարևոր նշանակություն ունի կյանքի որակը: Ավելին, կյանքի որակը դարձել է երկրի սոցիալ-տնտեսական անվտանգության, գիտատեխնիկական և մարդկային ներուժի զարգացման գլխավոր չափանիշը: Այս առումով, երկրի, ինչպես նաև տարածքային կազմավորումների կայուն զարգացումը գնահատելիս, կարծում ենք, պարտադիր պետք է ներառվեն կյանքի որակը բնութագրող ցուցանիշներ:

Կյանքի որակի մասին առավել ամբողջական պատկերացում կարող է տալ մարդկային ներուժի զարգացման ցուցիչը, որը հաշվարկվում է ՄԱԿ-ի կողմից ընդունված մեթոդաբանությամբ: Դա ինտեգրալ ցուցանիշ է՝ հաշվարկած որպես երեք ընդհանրացնող ցուցանիշների միջինացված արժեքը.<sup>9</sup>

- մարդու առողջության և կյանքի սպասվող միջին տևողության (երկարակեցության) ցուցիչը, որը չափվում է կյանքի տևողությամբ,
- բնակչության կրթության մակարդակի ցուցիչը, որը չափվում է գրագիտությամբ,
- բնակչության կենսամակարդակի ցուցիչը, որը չափվում է գնողունակության համարժեքությամբ, եկամտի մակարդակով:

Այսպիսով՝ մարդկային ներուժի զարգացման ցուցիչը հանդես է գալիս որպես կայուն սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր բնութագիր, որը հաշվի է առնում այնպիսի գործոնների համալիր ազդեցությունը, ինչպիսիք են տնտեսական բարեկեցությունը, առողջապահության, կրթության զարգացման մակարդակը, գիտական ներուժը և այլն, որոնցով կարելի է որոշել երկրում և տարածքային կազմավորումներում կյանքի որակի մակարդակը:

Բնակչության նյութական բարեկեցության և տնտեսական զարգացման մակարդակների էական տարբերությունները տարածքային կազմավորումների միջև բացասաբար են ազդում կայուն զարգացման վրա: 2010–2015 թթ. ընթացքում միջին ամսական անվանական աշխատավարձը <<-ում ավելացել է շուրջ 1.8 անգամ: Սակայն, չնայած աշխատավարձի մակարդակի այդպիսի դրական փոփոխությանը, և ամբողջ երկրում, և տարածքային միավորներում բնակչության աշխատավարձերի միջև դիտվում են նշանակալի անհամաչափություններ: Այսպես՝ բնակչության միջին ամսական անվանական աշխատավարձը 2015 թ. կազմել է 184647 դրամ, որից ավելի բարձր միջին անվանական աշխատավարձ են ստացել միայն Սյունիքի մարզում՝ 223278 դրամ և Երևանում՝ 200023 դրամ: Մնացած մարզերում այս ցուցանիշը տատանվում է միջին հանրապետականի նկատմամբ՝ 69%–87%-ի սահմաններում: Այդ ցուցանիշի նվազագույն մակարդակը Արագածոտնի մար-

<sup>9</sup>Տե՛ս Ա. Մակարյան, Ա. Թարայան, <<-ում կյանքի որակի ցուցանիշի գնահատում, Եր., 2010, էջ 9: [http://www.gov.am/u\\_files/file/documents/3.pdf](http://www.gov.am/u_files/file/documents/3.pdf)

գում է՝ 127432 դրամ, որը շուրջ 1.75 անգամ պակաս է Սյունիքի մարզի նույն ցուցանիշից: Նկատի ունենալով, որ աշխատունակ բնակչության հիմնական մասի համար աշխատավարձը Եկամտի միակ աղբյուրն է, աշխատանքի վարձատրության անհավասարությունը լուրջ հիմնախնդիր է դաշնում նաև այն առումով, որ բարձր աշխատավարձերի կողքին կան ապրուստի համար անհրաժեշտ ճակարդակից ցածր աշխատավարձեր: Հանրապետության միջին անվանական աշխատավարձից ցածր են ստանում. գյուղատնտեսության և մշակույթի ոլորտում՝ 1.8 անգամ, կրթության ոլորտում՝ 1.7 անգամ, իսկ առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման ոլորտում՝ մոտ 1.5 անգամ<sup>10</sup>:

Մեր հանրապետության առջև ծառացած առավել կարևոր հիմնախնդիրներից են գործազրկությունը և աշխատատեղերի բացակայությունը: 2010–2015 թթ. ՀՀ-ում գործազրկության մակարդակը նվազել է 0.5 տոկոսային կետով՝ կազմելով 18.5%: Հանրապետության մարզերի միջև գործազրկության մակարդակների համեմատական վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ տարբերություններն այստեղ զգալի են, ընդ որում, առավելագույն և նվազագույն մակարդակների տարբերությունը մարզերի միջև՝ /ներառյալ՝ Երևանը/ 5.3 անգամ է, տղամարդկանց դեպքում այդ տարբերությունը հասնում է մոտ 11 անգամի: Գործազրկության ցուցանիշով անբարենպաստ պայմաններում են այն տարածքային միավորները, որտեղ քաղաքային բնակչության տեսակարար կշիռը մեծ է, մասնավորապես՝ Երևանում /26.9%, Կոտայքում /22.8%, Շիրակում /20.8%, Լոռիում /16.9%/<sup>11</sup>:

Գործազրկության առկա վիճակի և ըստ Եկանուտների անհավասարության բարձր աստիճանի հետևանքներից է բնակչության աղքատությունը: Հիմնական ցուցանիշները, որոնց օգնությամբ վիճակագրության մեջ չափվում են աղքատության մասշտաբները, ապրուստի համար անհրաժեշտ նվազագույնից ցածր Եկամուտներով բնակչության քանակն ու տեսակարար կշիռն են: Ըստ ՀՀ ԱՎԾ իրականացրած՝ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքների՝ 2010 թ. համեմատությամբ աղքատության մակարդակը հանրապետությունում 2014 թ. նվազել է 5.8 տոկոսային կետով և կազմել 30%, այսինքն՝ Երևանի մշտական բնակչության հաշվով, աղքատների ընդհանուր թիվը կազմել է շուրջ 900000, որից շատ աղքատների թիվը մոտ 330000 է, իսկ վերջիններից ծայրահեղ աղքատների թիվը՝ մոտ 70000: Անցած հինգ տարիների ընթացքում աղքատության մակարդակի տարածքային անհամաշափությունները գրեթե պահպանվել են: Առավելագույն և նվազագույն աղքատության մակարդակ ունեցող տարածքային միավորների միջև տարբերությունը հասնում է մինչև 2.4 անգամի: Աղքատության միջին հանրապետական մակարդակից բարձր են Շիրակի /44.2%, Կոտայքի /37.2%, Լոռու /36.4%/ և Տավուշի /30.6%/ մարզերի ցուցանիշները: Նոյն ժամանակաշրջանում աճել է ծայրահեղ աղքատության մակարդակը, ընդ որում, առավել նկատելի է այդ ցուցանիշի աճը Արմավիրի /2.1 անգամ/, Տավուշի /2.25 անգամ/ և Գեղարքունիքի /1.5 անգամ/ մարզերում<sup>12</sup>:

<sup>10</sup> Վերլուծությունները կատարվել են ՀՀ ԱՎԾ Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2010–2015 թթ. և Պարենային ապահովություն և աղքատություն (2015 թ. հունվարի ներկայացմանը) հրապարակումների հիման վրա:

<sup>11</sup> Ուսումնավորությունները կատարվել են ՀՀ ԱՎԾ Գործազրկություն ըստ ՀՀ մարզերի և Երևանի 2010–2015 թթ. հրապարակումների հիման վրա:

<sup>12</sup> Տես ՀՀ ԱՎԾ, Աղքատության պատկերը Հայաստանում 2008–2014 թթ., մաս 1, էջ 45:

Տարածաշրջաններում աղքատության այդքան բարձր մակարդակը դարձել է ժողովրդագրական բացասական միտումների պատճառներից մեկը: Ներկայումս << բնակչությունը կայուն տեմպերով նվազում է, ինչն ազգային անվտանգության առավել լուրջ սպառնալիքներից է: Միգրացիայի, ծնելիության և մահացության ներկայիս մակարդակների պահպանումը կիանգեցնի այնպիսի հրավիճակի, որ 2025 թ. երկրի բնակչության թիվը կվազմի 2.7 մլն մարդ: Ծնելիության ընդհանուր գործակիցը 2015 թ., 1000 բնակչի հաշվով, կազմել է 14.1 պրոմիլ՝ 2010 թ. 14.7 պրոմիլի և 1990 թ. 22.5 պրոմիլի դիմաց: Ծնելիության գումարային գործակիցը, ըստ ՍԱԿ-ի տվյալների, շուրջ 1.4 անգամ ավելի ցածր է, քան անհրաժեշտ է բնակչության պարզ վերարտադրության համար<sup>13</sup>:

Անցած 20–25 տարիներին մեր երկրում տեղ գտած սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխությունների հետևանքներից մեկը համրապետության միգրացիոն գործընթացներն են: Ընդ որում, միգրացիայի՝ հատկապես միջազնական միգրացիայի, մասնավորապես՝ տղանարդկանց տևական բացակայությունը ընտանիքներից ուղղակիորեն բացասարար է ազդուն բնակչության վերարտադրության վրա: Հետազոտությունները վկայում են, որ 2014 թ. դրությամբ արտաքին և ներքին միգրացիոն տեղաշարժերում ընդգրկված տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամների 19.6%-ի տեղաշարժերը եղել են ներհանրապետական, 10.1%-ը՝ ԼՂՀ-ում, իսկ մնացած 70.3%-ը՝ միջազնական, որի գերակշիռ մեծամասնությունը՝ 89.6%-ը, Ուսւաստանի Դաշնությունում<sup>14</sup>: Ընդ որում, միգրանտների շրջանում անցկացրած հարցումների արդյունքները վկայում են, որ միգրացիայի շարժառիթը ավելի քան 82%-ի համար վարձու աշխատանքն է և ծեռնարկատիրական գործունեությունը<sup>15</sup>:

Մարդկային ներուժի զարգացման կարևորագույն խնդիրներից է կրթության մակարդակը, որը բնութագրվում է չափահասների գրագիտությամբ՝ ձեռք բերված տարրական, միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում: Հայաստանում կրթության հանդեպ հասարակության ունեցած ձգությունը միշտ էլ մեծ է եղել: Այդ են վկայում վիճակագրական տվյալները: 2011 թ. մարդահամարի տվյալների համաձայն՝ 15-ից բարձր տարիքի բնակչության շրջանում միջնակարգ և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների տեսակարար կշիռը կազմել է, համապատասխանաբար՝ 44.7% և 20.3%, մոտ 23%-ն ունի բարձրագույն և հետքուհական կրթական մակարդակ, իսկ տարրական կրթություն չունեցողների տեսակարար կշիռն ընդամենը 0,5% է<sup>16</sup>: Եթե հանրակրթության ոլորտի վիճակը հանրապետությունում գոհացուցիչ է, ապա նույնը չի կարելի է ասել նախադպրոցական և բուհական կրթության ներկայիս մակարդակի մասին: Նախադպրոցական կրթություն ստանալու համար հանրապետության կեսից ավելի համայնքներում բացակայում են համապատասխան հաստատությունները, իսկ երիտասարդների համար խիստ սահմանափակ են բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունները՝ կապված մեծ չափերի հասնող ֆինանսական ծախսների հետ:

<sup>13</sup> Տե՛ս <http://www.unfpa.am/fertility>

<sup>14</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 23:

<sup>15</sup> [http://www.un.am/up/library/Sample%20Survey\\_Fertility\\_arm.pdf](http://www.un.am/up/library/Sample%20Survey_Fertility_arm.pdf), էջ 23:

<sup>16</sup> Ուսումնասիրությունները կատարվել են << ԱՎԾ Հայաստանի Հանրապետության 2011 թ. մարդահամարի արդյունքների հիման վրա:

Որպես տարածաշրջանի կայուն զարգացման կարևորագույն չափանիշ է դիտարկվում բնապահպանական հավասարակշռությունը: Տարբեր գնահատումներով՝ բնապահպանական իրավիճակը <<-ում բավարար չէ: << տարածքը, բնապահպանական առումով, բնութագրվում է մի շարք անբարենպաստ գործընթացներով, ինչպիսիք են ջրի և օդի որակի անկման միտումները, անտառային տարածքի նվազումը, հողերի դեգրադացիան և լանդշաֆտի փոփոխությունները: Ընդ որում, այս պարագայում անչափ մեծ է տեխնածին գործոնների ազդեցությունը:

Սանհիտարական աղբավայրերի բացակայության պատճառով կրծտ թափոնները տեղափոխվում են բաց աղբանոցներ, որտեղ դրանք սովորաբար այրվում են, թունավոր նյութեր արտանետելով մքնոլորտ: Մթնոլորտային օդի հիմնական աղտոտողներն են հանքարդյունաբերության, գունավոր մետալուրգիայի, քիմիական արդյունաբերության, շինարարական արդյունաբերության, էներգետիկայի ձեռնարկությունները: Այդ առումով, առավել բարդ բնապահպանական իրավիճակ է ներկայում ծևավորվել Սյունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզերում: Մթնոլորտային օդի որակի հետազոտությունները ցույց են տվել, որ հանրապետությունում ամենաաղտոտված քաղաքներն են Ալավերդին, Արարատը և Հրազդանը: Մթնոլորտային օդի որակը բավարար վիճակում չէ նաև Երևանում՝ տրանսպորտային գերնորմատիվային արտանետումների, էկոլոգիական անընդունելի շինարարական աշխատանքների ու կանաչապատ տարածքների կրծատման պատճառով<sup>17</sup>: Անցած 20 տարիների ընթացքում Հայաստանում զգալիորեն նվազել է անտառածածկույթը: 2014-ին այն կազմել է 285.5 հազ. հա՝ 2010 թ. 305.5 հազ. հա-ի և 2000 թ. 321.1 հազ. հա-ի դիմաց<sup>18</sup>: Անտառածածկույթի նվազումը օդի վաստորակի, հողերի դեգրադացիայի, էրոզիայի և սողանքների ու լանդշաֆտի փոփոխությունների պատճառ է դառնում: Մեր հանրապետության հողերի դեգրադացիայի և լանդշաֆտի փոփոխությունների պատճառ են նաև արոտավայրերի չկանոնակարգված օգտագործումն ու գերարածեցումը, ինչպես նաև գյուղատնտեսությունում թունաբիժնկատների օգտագործման հետևանքով հողերի աղտոտվածությունը<sup>19</sup>: Միանք այն հրատապ խնդիրներն են, որոնց լուծումը պահանջում է բնապահպանական քաղաքականության մշակում և իրականացում, որի հիմնական նպատակը պետք է լինի շրջակա միջավայրի՝ տեխնածին գործոններով պայմանավորված աղտոտվածության բացասական դրսերումների հաղթահարումը և երկրում բնապահպանական իրավիճակի կայունացումը:

Վերոնշյալ հիմնախնդիրների լուծումից է կախված մեր երկրի սոցիալ-տնտեսական համակարգի կայուն զարգացումը, որը հնարավոր կլինի ապահովել միայն տարածքային միավորների՝ մարզերի, համայնքների կայուն զարգացման պարագայում: Հետևաբար՝ կայուն զարգացման մոդելին անցնելու համար հարկ է էական ճշգրտումներ կատարել երկրի տարածքային սոցիալ-տնտեսական քաղաքականության մեջ: Անհրաժեշտ է տարածքային զարգացման այնպիսի ռազմավարության մշակում և իրագործում, որը կսահմանի

<sup>17</sup> Տես Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրները <<-ում (հետազոտական խմբի ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆ. Ս. Գևորգյան), Եր., «Տնտեսագետ», 2014, էջ 24:

<sup>18</sup> Ուսումնասիրությունները կատարվել են << ԱԿԾ Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում, 2000, 2010 և 2015 թվականների հրապարակումների հիման վրա:

<sup>19</sup> Տես <https://www.adb.org/sites/default/files/linked-documents/cps-arm-2014-2018-ena-hy.pdf>

մարդկային ներուժի զարգացման նպատակները, դրանց հասնելու փուլերը, կնախանշի պահանջվող ռեսուրսները, ինչպես նաև դրանց իրականացման համար պաշտոնատար անձանց պատասխանատվության ձևերն ու սահման-ները: Տարածքային կայուն զարգացման ռազմավարությունը չպետք է մշակվի միայն կենտրոնական մարմինների կողմից: Դա պետք է կատարվի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ (մասնավոր հատված, հասարակական, քաղաքական կազմակերպություններ, քաղաքացիական հասարակություն): Հիանալի կարգությունից և դժգոհությունից խուսափելու համար անհրաժեշտ է բնակչության ներգրավումը գործընթացին, որի համար նախ հարկ է ուսումնասիրել և բացահայտել շահագրգիռ կողմերին, որոնք պետք է ներգրավված լինեն, ապա որոշել, թե ինչպիսի մասնակցային մեթոդներ կարող են օգտագործվել: Տարածքային կայուն զարգացման ռազմավարության իրականացումը համալիր գործընթաց է, որի արդյունքում, տարածաշրջանային մակարդակով, լուծվում են բնակչության իրմանախնդիրները, սոցիալ-տնտեսական և բնապահպանական զարգացման հաշվեկշռվածությանը հասնելու ճանապարհով բարելավվում են բնակչության կենսապայմանները, որն իրականացվում է տարածաշրջանի ողջ ռեսուրսային ներուժի ռացիոնալ օգտագործման իրման վրա, ներառյալ աշխարհագրական առանձնահատկությունները, ինչպես նաև տնտեսության, ենթակառուցվածքների և տվյալ տարածքային կազմավորումների հնարավորությունները:

Մեր կարծիքով՝ տարածքների զարգացման կառավարման ժամանակակից քաղաքականությունը պետք է տարբերակվի և հենվի աշխարհագրական, սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների և զարգացման միտումների իրացության վրա: Այն տարածքները, որոնք կիամարվեն հեռանկարային, շեշտադրումը պետք է արվի գործարարության խրախուսման, կապիտալի համար բարենպաստ պայմանների ստեղծման, ներդրումների ներհոսքի և կայուն աճի վրա, իսկ այն շրջանները որոնք կձանաչվեն անհեռանկարային, քաղաքականության հիմքում պետք է լինի տարածքային կազմավորումներում բնակչության օգնելը, պատմամշակութային լանդշաֆտների պահպանումը, տեղական ինքնակառավարման ինստիտուտի ամրապնդումը:

### Օգտագործված գրականություն

1. Մակարյան Ա., Բաբայան Ա., ՀՀ-ում կյանքի որակի ցուցանիշի գնահատում:
2. Հայկացյան Վ., Հայաստանի գյուղատնտեսության խնդիրները և զարգացման հեռանկարները, «21-րդ դար», 4/18/, 2007:
3. ՀՀ ԱՎԾ [www.armstat.am](http://www.armstat.am)
4. Եկոլոգիական անվտանգության հիմնախնդիրները ՀՀ-ում (հետազոտական խմբի ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆ. Ս. Գևորգյան): Եր., «Տնտեսագետ», 2014:
5. <https://www.adb.org/sites/default/files/linked-documents/cps-arm-2014-2018-ena-hy.pdf>
6. <http://www.unfpa.am/fertility>
7. [http://www.gov.am/u\\_files/file/documents/3.pdf](http://www.gov.am/u_files/file/documents/3.pdf)

**СЕРГЕЙ АСЛАНЯН***Аспирант кафедры Управления*

*Проблемы территориального социально-экономического развития РА и пути их решения в контексте устойчивого развития.* – Одна из главных задач управления территориального развития любой страны в долгосрочной перспективе состоит в обеспечении ее устойчивого и равномерного развития. В статье рассмотрены насущные проблемы территориального социально-экономического развития РА, выделены те критерии, которые наиболее целостно могут охарактеризовать уровень социально-экономического развития в контексте устойчивого развития. Представлены предложения для перехода к модели территориального устойчивого развития.

**Ключевые слова:** социально-экономическое развитие, устойчивое развитие, качество жизни, индекс развития человеческого потенциала, социальная устойчивость, экологическое равновесие.

JEL: R10, R12, R13, O21, O29

**SERGEY ASLANYAN***Post-graduate at the Chair of Management at ASUE*

*The RA Territorial Socio-Economic Problems and the Ways of Their Solution in the Context of Sustainable Development.* – In every country one of the main tasks of management of territorial development is to ensure its sustainable and balanced development in the long run. The article deals with the problems related to territorial socio-economic development in the RA, the criteria that most holistically characterize the level of socio-economic development in the context of sustainable development. Proposals for the transition to a model of territorial sustainable development are presented.

**Key words:** socio-economic development, sustainable development, quality of life, index of manpower development, social stability, environmental balance.

JEL: R10, R12, R13, O21, O29